

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՁԱՅՆՆ ԸՆԴԴԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՏԻ

Երևանի պետական համալսարանի հրապարակչությունը, հերթական անգամ անդրադառնալով Նայոց եղեռնի թեմային, վերջերս լույս է ընծայել Վարուժան Պողոսյանի «Նայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պարմագրության և հասարակական-քաղաքական մարքի գնահատմամբ» աշխատությունը¹:

Գրքի արդեն իսկ վերնագրում օգտագործված «Նայոց ցեղասպանության առաջին փուլ» հասկացությունը վկայում է, որ հեղինակը հստակ դիրքորոշում ունի Օսմանյան պետության հայաջինջ գործողությունները պարմականորեն ճիշտ ըմբռնելու և դասակարգելու հարցում: Վ. Պողոսյանը գրքի առաջաբանում, քննարկելով այդ հարցի վերաբերյալ շատ պարմաբանների (թե՛ հայ, թե՛ օտար) տեսակետները, շարադրում է իր դիրքորոշումը, այն է՝ Նայոց ցեղասպանությունը՝ հիմնավորված համխառնականության և համաթյուրեականության (պանիսլամիզմ և պանթյուրքիզմ) ռասիստական գաղափարախոսությունների վրա, մեկ ամբողջական քաղաքականություն է՝ որը իրականացվել է երեք փուլով՝ համիդյան կոտորածներ, 1915-18 թթ. Նայոց Մեծ եղեռն և քեմալական ջարդեր՝ իրականացված արդեն Արևելյան Նայաստանում, որոնց ընթացքում նպատակ էր դրվել ոչնչացնել թե՛ հայ ժողովրդի արևելյան հատվածը, և թե՛ Առաջին համաշխարհային պատերազմում հաղթող երկրների կողմից հայ ժողովրդի՝ իր պարմական հայրենիքում իր ազատ, անկախ պետականությունը կառուցելու իրավունքը: Նեղիմակը հայ ժողովրդի բնաջնջման՝ երեք փուլով իրականացված գործողությունները որպես մեկ ամբողջական քաղաքականություն ըմբռնելու իր տեսակետը հիմնավորում է հետևյալ իրողություններով, այն է՝ բոլոր փուլերում նպատակը եղել է հայ ժողովրդի բնաջնջումը, բոլոր փուլերում այդ քաղաքականությունը մշակել և իրագործել է Օսմանյան պետությունը, ընդ որում այդ քաղաքականությունը թե՛ իր ծրագրվածության ու կանխամտավածության, թե՛ իրագործման եղանակների ու միջոցների առումով նույնն է եղել թուրքական երեք վարչակարգերի օրոք:

Այսպես մեր կողմից ավելացնենք, որ թուրք պետության հայահալած քաղաքականության գաղափարախոսությունը պարմական փառքեր հանգամանքներում ունեցել է երկու գաղափարախոսական հենք՝ պանիսլամիզմ և պանթյուրքիզմ: ԺԹ. դարի վերջին բառորդում ձևավորված այդ երկու գաղափարախոսություններով էլ ճանաչվում էր միայն թուրք ժողովրդի՝ սեփական հող և սեփական պետություն ունենալու իրավունքը, քրիստոնյա ժողովուրդները, առաջին հերթին հայերը, խոչընդոտ են այդ իրավունքի իրականացման համար:

Թեմայից շեղում չի լինի, եթե նշենք, որ Նայոց ցեղասպանության երեք փուլերի՝

¹ Վ. Պողոսյան, Նայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պարմագրության և հասարակական-քաղաքական մարքի գնահատմամբ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Երևան, 2011:

մեկ միասնական քաղաքականություն լինելու նորագույն սպագույցը եղավ Օսմանյան պարագլուխների այժմյան կրթեր հերետոքների՝ Ադրբեջանի ղեկավարների որդեգրած քաղաքականությունը Արցախի, Ադրբեջանի հայ բնակչության և բուն Նայասարանի նկարմամբ: Ի դեպ, այդ քաղաքականությունը ես ունեցավ երեք փուլ. հայերի ջարդեր Սումգաիթում (ցեղասպանության առաջին փուլ), զանգավածային փրկահանություն և լայնածավալ պարերագմ Արցախի ու առհասարակ Նայասարանի դեմ:

Նշենք, որ Վ. Պողոսյանի աշխատությունը Նայոց ցեղասպանությանը վերաբերող վիթխարի փաստագրական և պարմագիտական գրականության մեջ յուրօրինակ փորձ է հայ ժողովրդի բնաջնման թուրքական քաղաքականության առաջին փուլի առաջացրած արձագանքները փալու մեկ արևմտաերտպական երկրի՝ փվյալ դեպքում Ֆրանսիայի օրինակով: Այս փորձը ասես ինքնին մասնագետներին արված մի առաջարկ է՝ այդ արձագանքները ամփոփ ձևով ներկայացնելու նաև երտպական մյուս երկրների օրինակներով. դա մեր կարծիքով կլինի ամբողջ նյութի մի յուրաքանակ դասակարգում ըստ փարբեր երկրների և հնարավորություն կրա թե՛ գուգահեռներ անցկացնելու այդ երկրների հասարակական կարծիքների, թե՛ պերական ուղեգծերի միջև, թե՛ վեր հանելու արձագանքների փարբերություններն ու դրանց հասարակական-քաղաքական պարմառները:

Ելնելով փվյալ նյութի ներքին պարմագիտական փրամաբանությունից, հեղինակը առաջին գլխում ներկայացնում է Նայոց ցեղասպանության առաջին փուլի պարմության՝ Ֆրանսիայում յուս փեսած փպագիր սկզբնաղբյուրները, որոնք փարբեր են թե՛ իրենց ընդգրկումով, թե՛ իրադարձությունների մեկնաբանությամբ: Այդ սկզբնաղբյուրների մեջ, սակայն, առավել արժեքավորը Ֆրանսիայի արգործնախարարության վավերագրերի ժողովածուն է՝ «Դեղին գիրքը»: Այն յուս է փեսել 1897 թ. (երբ կոտորածները դեռես շարունակվում էին), Ֆրանսիայի Ազգային ժողովի մի շարք պարգամավորների, այդ թվում հայրնի հասարակական գործիչ և պարմաբան Ժան Ժորեսի, Դ. Կոշենի և Ալբեր դը Մունի պահանջով:

Նայկական հարցը, նշում է հեղինակը, Ֆրանսիայի Ազգային ժողովում առաջին անգամ քննարկվել է 1896 թ. աշնանը: Կառավարությունը թեև վարում էր թուրքամեր քաղաքականություն, սակայն ազդեցիկ պարգամավորների ճնշման փակ սփիպված է լինում յուս ընծայել արգործնախարարության համապարասխան փաստաթղթերի մի մասը: Այս իրողությունն արդեն իսկ վկայում է, թե համիդյան կոտորածների չափերը որքան մեծ են եղել, որ Ֆրանսիայում արձագանք են գրել այդքան բարձր մակարդակով՝ քննարկվել են այդ առաջարար երկրի օրենսդիր մարմնում ու արյունալի կոտորածներից ընդամենը մեկ փարի անց յուս է ընծայվել 1891-1897 թթ. Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի և մի շարք այլ Ֆրանսիական դիվանագետների՝ Ֆրանսիայի արգործնախարարությանը ուղարկած գեկուցագրերի մի գգալի մասը:

Վ. Պողոսյանն, ի դեպ, նշում է, որ այդ գեկուցագրերը ուղարկվել են Թուրքիայի ամենափարբեր նահանգներից, հերետաբար ներկայացնում են հայերի հալածանքների փորք ի շարն ամբողջական պարկերը: Նեղինակը այդ դիվանագետների մեջ իրավացիորեն առանձնացնում է դեսպան Կամբոնին, որ անփեսելով իր պաշտոնական դիրքին սպառնացող

վրանգը (նրա անմիջական ղեկավարը՝ Ֆրանսիայի արագործնախարար Նանտոն վարում էր թուրքական վայրագությունները լուծյալ մարմնով քաղաքականություն), ամբողջ ձայնով հանդես է գալիս հայերի բնաջնջման դեմ, ոչ միայն կոտորածները դատապարտող գեկուցագրեր ուղարկելով արագործնախարարին, այլև բողոք ներկայացնելով Բարձր Դռանը: Վ. Պողոսյանը մեջբերում է ամերիկահայ պարմարան Վ. Տարբյանի խոսքը Կամբոնի մասին. «Կամբոնը այն եզակիներից էր, ով այդչափ արիություն ի հայր բերեց՝ իր կառավարությանը հաղորդելով 1894-96 թթ. կոտորածների «սարսափազդու» իրողությունները»:

Նամակառնություններն քննարկելով «Դեղին գրքում» գերեզման վկայությունները, Վ. Պողոսյանը անում է մի շարք իրավացի հերքություններ, այն է՝ բոլոր ֆրանսիացի դիվանագետները և առաջին հերթին դեսպան Կամբոնը միաձայն արձանագրում են՝ Նայկական հարցը մաս է կազմում երոպական դիվանագիտության օրակարգի: Բացի այդ՝ նրանք վկայում են, որ հայկական ջարդերը մաս են կազմում թուրք կառավարության քաղաքականության: «Կամբոնը սուլթանը այդ քաղաքականությունն իրագործելու համար օգտվում է պարսապի գործողությունից, որոնք են թուրք բնակչության կրոնական անհանդուրժողականությունը, ուրիշներ թալանելու, պարսապի արդյունքը բռնի ուժով յուրացնելու մութ բնագործ և երոպական պետությունների հայեցողական դիրքորոշումը Նայկական հարցի նկատմամբ:

Ավելացնենք, որ եթե անգամ «Դեղին գրքում» ընդդրոպար գերեզման վաստաթղթերում իրադարձություններին այդպիսի սկզբունքային գնահատական էր տրվում, ապա կարելի է ենթադրել, թե չիրապարակված գեկուցագրերում այդ գնահատականը որքան ավելի խիստ է եղել:

Վ. Պողոսյանը քննության է առնում նաև Ֆրանսիայում այդ տարիներին լույս տեսած այլ սկզբնաղբյուրներ, որոնցից առավել արժեքավորը համարում է Ֆրանսիայի փոխնախարար Մ. Կարլիեի կողմէ Է. Կարլիեի օրագիրը և 1869 թ. Փարիզում տպագրված «Նայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» ժողովածուն, որի առաջաբանում ֆրանսիացի հայտնի քաղաքական գործիչ Ժ. Կլեմանսոն, որ քննադատում էր Ֆրանսիայի կառավարության գաղութարարական քաղաքականությունը, անաչառ գնահատական է տալիս ջարդարարների գործողություններին: Ժողովածուի մեջ գերեզման են նաև հայ ականատեսների՝ Արևմտյան Նայաստանից և Կիլիկիայից Ֆրանսիա ուղարկած անստորագիր նամակները, որոնցում ամենայն մանրամասնությամբ ներկայացված է հայոց ջարդերի արյունալի համապատկերը:

Թեև այդ ժողովածուի մեջ ամփոփված են հայ ականատեսների վկայությունները, սակայն դա բնավ չի նվազեցնում նյութի վաստագրական արժեքը: Վ. Պողոսյանը հայ ականատեսների վկայությունների մեջ կարևորը համարում է այն, որ տարբեր նահանգներից տարբեր մարդկանց ուղարկած նամակներում միաբան նշվում է կոտորածներն սկսելու հրահանգը սրացվում էր ամենավերելից՝ կառավարությունից, իսկ տեղերում կազմակերպիչները տեղական իշխանություններն էին: Վ. Պողոսյանը վկայակոչում է բազմաթիվ նամակներ, որոնք իրենց մանրամասներով տարբերվելով միմյանցից, ընդհանրական են մի հիմնական կետում, որ թուրք խուժանին տրված ցուցումը մեկն էր՝

հայերը դավաճաններ են, իսլամի թշնամիներ, նրանք հարուստ են ձեր աղքատության հաշվին, կոտորեցեք նրանց և խլեցեք ունեցվածքը:

Ահա այդ նամակներից ընդամենը մեկը՝ ուղարկված Տրապիզոնից, 1895 թ. հոկտեմբերին. «Թուրքերին բաժանում են խմբերի և կառավարությունը նրանց հրացաններ, ասրճանակներ, այլ զենքեր ու փամփուշտներ է հարկացնում: Թուրք եղբայրներով շրջապարված կուսակալը մտավ հայկական թաղամասը և անձամբ հրահանգներ արվեց, թե ում է հարկավոր սպանել, մասնավորապես՝ հարուստներին»:

Վ. Պողոսյանը բնորոշ դիպարկում է անում, որ քաղաքներ նահանգներում քրեական իշխանությունները փորձում էին կոտորածների պարասխանաբովությունը բարդել հայերի վրա: Օրինակ՝ ականաբեսներից մեկը վկայել է՝ Տրապիզոնում կառավարիչները թուրք բնակչությանը գրգռելու համար հայտարարել են, թե հայերը անգլիացիներին միացած՝ ցանկանում են քաղաքի Օսմանի հարսությունը և ջնջել իսլամը, դրա համար էլ կոտորածներ են հրահրում:

Քննարկելով 1894-96 թթ. կոտորածների՝ Ֆրանսիայում առաջացրած արձագանքները, Վ. Պողոսյանը իրավացիորեն առաջինը անդրադառնում է պարսկական ուսումնասիրություններին, որոնց հեղինակները ամբողջ նյութը քաղել են Օսմանյան կայսրության նահանգներում իրենց կատարած շրջագայությունների ժամանակ: Այդպիսի փաստագրողներից Վ. Պողոսյանը առանձնացնում է Ֆրանսիացի հրապարակախոս Վ. Բերարին, որի «Սուլթանի քաղաքականությունը» գիրքը համարում է արժեքավոր սկզբնաղբյուր: Սակայն Բերարը հիմնվել է ոչ միայն իր սրացած տպավորությունների, ականաբեսների վկայությունների վրա, այլև օգտագործել է շատ տպագիր սկզբնաղբյուրներ, մասնավորապես Մեծ Բրիտանիայի արագործնախարարության փաստաթղթերի «Դատույցի գիրք» ժողովածուի նյութերը: Դա նրան հնարավորություն է տվել նյութը շարադրել անկողմնակալ և փաստաբանված կերպով:

Բերարը գրում է, որ Արդուլ Նամիդի վրա վճռական ազդեցություն ուներ կրոնական գործուն: Այսինքն՝ նա, ամեն ինչից զատ, գործում էր որպես մոլեռանդ մուսուլման: Բացի այդ, Բերարը նկատում է, որ սուլթանի վրա, հերեուաբար, մեծ ներգործություն ունեին մահմեդական մոլեռանդ քարոզիչները. նրանք վերջինիս մեջ արմատավորել էին այն գաղափարը, որ Օսմանյան կայսրությունում ապելու և զարգանալու իսլամը ունեն միայն մահմեդականները: «Կոտորածի գաղափարը ձևավորվել, ճնշող է դարձել այդպես, աստիճանաբար, միանգամայն քաղաքներ ուղիներով»: Ուստի սուլթանը քայլեր էր ձեռնարկում մահմեդական բնակչությանը հոգեբանորեն նախապարաստելու մոտալույս կոտորածներին:

Բացի այդ, չբավարարվելով սույն կրոնական մոլեռանդություն սերմանելով, նա ջանում էր հայերի նկատմամբ արելություն բորբոքել նաև ընկերային ու քաղաքական հիմքերով: Նա հավաստում էր, որ հայերին «սպարում է Երուսալան, որը, գործելով իսլամը սպորադաս դարձնելու նպատակով, պահանջում է ոչ թե իրավունքներ, այլ արկունություններ»: Այդ ամենը նպաստում էր, որ իր շահերը վրանգված համարի ոչ միայն մոլեռանդ ամբոխը, այլև թուրք վերնախավը: Վ. Պողոսյանը նշում է, որ դա, ըստ Բերարի, ոչ այլ ինչ էր, քան ծրագրված սպանդի նախապարաստում ամենաբարձր մակարդակով: Նեղինակը, նշելով,

սակայն, Բերարի մոտեցումների անվիճելի արժեքավորությունը, միաժամանակ ընդգծում է, որ Ֆրանսիացի հրապարակախոսը կոպորածների պարճառները քննելիս Գոթեի Երազման ժամանակից նախապաշարումների, նաև օսմանյան հայախալած քաղաքականությունը մասնավորապես պայմանավորում է Նիցալյան կուսակցության գործունեությամբ: Սակայն Վ. Պոդոյանը անմիջապես էլ վկայակոչում է Բերարի՝ իր իսկ հայտնած եւ այդ կարծիքին հակասող ողջամիտ դիրքորոշումը, այն է՝ սուլթանը «պարբերաբար էր գործել շատ ավելի մեծ եւ շատ ավելի հանցավոր սխալ, կարծես կանխակալորեն ազգին շփոթելով կոմիսիոնների հետ, ժողովրդին՝ մի խումբ առաջնորդների հետ»:

Իրադարձությունների նկատմամբ Վ. Բերարի դիրքորոշումն ամբողջացնելու համար գրքում ներկայացված է նաև այն, թե մեծ տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի կառավարությունը եւ մամուլը ինչ վերաբերմունք ունեին համիդյան կոպորածների խնդրում:

Ըստ Վ. Պոդոյանի մեծ տերությունների դիրքորոշումը այս է. նրանք Թուրքիայի կառավարությանը առաջարկելով բարեփոխումներ իրականացնել Արևմտյան Նայասպանում՝ այդ խնդրում հանդես էին բերում անհրաժեշտ հետևողականություն, չէին վերահսկում բարեփոխությունների իրականացման ընթացքը, դրանով իսկ սուլթանին անուղղակի կերպով ակնարկելով, որ նա կարող է խնդրին լուծում տալ ըստ իր հայեցողության. Բերարը դա համարում է «անուղղակի մեղսակցություն»: Իսկ մամուլի վարքագիծը այլ բան չէր, քան «լռության դավադրություն», որի համար, անկասկած, վճարում է թուրքական դեսպանատունը (Ֆրանսիական 17 թերթեր ստանում են դրամական օժանդակություն), սակայն այդ ամենը Գոթեի է ունենում Ֆրանսիական կառավարության հանդուրժողականության հետևանքով»:

Նայոց ցեղասպանության առաջին փուլի հետ կապված շատ էական խնդիրներ Արևմտյան Նայասպանում իր սրագած քաղաքականությունների հիման վրա է քննարկում նաև մեկ այլ ֆրանսիացի հրապարակախոս՝ Լ. Կոնստանտինը:

Վ. Պոդոյանը նրա դիրքորոշման արժանիքը համարում է այն, որ նա ցեղասպանության միակ պարասխառնաբան համարում է օսմանյան կառավարությանն ու ղեկավար շրջանակներին, որոնց, ինչպես նշում է՝ «գործելու կարգախոսը տրվել էր վերելից»։ Կոնստանտինը ընդգծում է եւս երկու կարևոր հանգամանք, այն է՝ ըստ այդ կարգախոսի գործող գիւղերներն ու մուսուլման ամբոխը հետամուտ էին ստանալու ավարի իրենց բաժինը եւ սպանությունները կատարում էին մուսուլման աջակցությամբ: Նա այդ իրողությունը անձամբ տեսել է Բիրլեյիում տեղի ունեցած կոպորածների ժամանակ: Կոնստանտինը ուսումնասիրությունն արժեւորվում է նաև այն հանգամանքով, որ նա մասնավորապես քննարկում է Գոթեի ժամանակահատվածում երկրում բնակվող հայերի թվի հարցը, մի բան, որը նրա շատ ժամանակակիցներ շահարկել են եւ նվազեցրել այդ թիվը, հիմնվելով Վ. Բիրլեյի անստույգ տեղեկությունների վրա:

Սակայն Կոնստանտինը, գրքի հեղինակի բնորոշմամբ, ճիշտ է վարվել, որ իբրև ստույգ աղբյուր վկայակոչել է Լ. Պոլսի Նայոց պարբերաբարների փոխադրվող, որ այդ ժամանակ հայոց թիվը կայսրությունում հասնում էր շուրջ երկու միլիոնի:

Կոնստանտինը թեպետ ուղղակիորեն չի քննադատում կոպորածների նկատմամբ երոպական պետությունների կրավորական դիրքորոշումը, այնուամենայնիվ ակնարկներ է

անում, որ Արևմուտքը հայերին «հուսալի աջակցություն» չի ցուցաբերում, իսկ Գերմանիայի կանցլեր Վիլհելմ II-ին բացահայտորեն համարում է Աբդուլ Նամիդի բարեկամը:

Վ. Պողոսյանը այնուհետև վերածում է ֆրանսիացի պարմաբանների աշխատությունները, որոնցում, ի տարբերություն սկանադինների վկայությունների, գիտականորեն քննարկվում են Նայոց ցեղասպանության առաջին փուլի պարմական հիմքերը: Նա այդ պարմաբանների մեջ հարկապես առանձնացնում է Ա. Վանդալին, որ մասնավորապես ուսումնասիրում էր ԺԸ. դարի ֆրանս-թուրքական դիվանագիտության պարմությունը, հետևաբար մոտիկից գիտեր Նայկական հարցի էությունը: Նա հայերի բնաջնջումը բնութագրում է որպես «մեծագույն կոտորած», «հրեշավոր արարք», գրելով, թե ասես վերադարձել է այն ժամանակը, «երբ թուրքմենական հորդաները ասպարակում էին քաղաքակիրթ և բրիտանական Ասիան»:

Վ. Պողոսյանի գնահատմամբ Վանդալը մասամբ տուրք է տվել ԺԸ. դարի վերջին Ֆրանսիայի պարմաբանների շրջաններում արմատավորված այն տեսակետին, թե իրադարձությունների դրդապատճառը հայկական կուսակցությունների գործունեությունն էր, նշելով, սակայն, որ այդ գործունեությունն էլ իր հերթին ուներ իր դրդապատճառը՝ հայ ժողովրդի անուր տառապանքը օսմանյան իշխանությունների լծի տակ: Վանդալի կարծիքով քանի որ Թուրքիան ի վիճակի չէ ներսից ինքնուրույն բարենորոգվելու, ուստի հարկ է բարենորոգել դրսից, բռնի միջոցներով:

Գրելով, որ դաշնակիցների «շահերը Արևելքում չեն համընկնում», Վանդալը եզրակացնում է, որ եւրոպական պետությունների միջև Արևելքում շահերի հավասարակշռությունը պահպանելու համար անհրաժեշտ է պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը: Ըստ երևույթին նկատյալ ունի Ասիական Թուրքիան, բանգի ի՞նչ ամբողջականության մասին կարելի է խոսել, երբ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքներով Թուրքիայից անկախացան և անջարվեցին արևելաերոպական շատ երկրներ:

Չբրոմ այնուհետև ներկայացված են մեկ այլ պարմաբանի՝ I. Մեյրիսի հայացքները. նա քննարկում է Նայկական հարցի փոքր-ինչ այլ հիմնախնդիրներ և այլ ելակետից մեկնաբանում Նայոց ցեղասպանության դրդապատճառները: Պարմաբանը թեև մակերեսորեն, այնուամենայնիվ ճանաչում է Նայկական հարցի գոյությունը, Բեռլինի վեհաժողովի Թուրքիային առաջարկված բարենորոգումների տխուր ճակատագիրը: «Այն հայերին, ովքեր իրենց ապրանքները, տները, կանանց պարիվը և երբեմն սեփական կյանքը պաշտպանելու հանցանքն են գործել՝ բանտ են նետում», - գրում է նա: Ըստ Վ. Պողոսյանի, ֆրանսիացի պարմաբանի ուսումնասիրության հիմնական արժանիքն այն է, որ նա պարմականորեն ճիշտ է ըմբռնում պարճառ-հետևանք կապը հայ-թուրքական հարաբերություններում: Այսպես, Եւրոպան բարենորոգումներ է առաջադրում Թուրքիային. վերջինս նենգափոխում է խնդրի էությունը և սկսում է հայերին դիտել իբրև նենգ հպարակների, այն է՝ գոռին դարձնելով մեղավոր: Ելնելով այս մեկնակետից, Մեյրիսն զգուշանում է, որ կոտորածներն սկսելու հրահանգը գալիս է օսմանյան միապետից և իշխող վերահսկավիճ, որոնք, ամեն բանից զատ, ջանում էին «զանգվածային կոտորածին» օրինականություն հաղորդելու համար գոհերին ներկայացնել իբրև մեղավորների:

Մեյրիեն նույնպես նշավակում է եւրոպական պեւոթություններին, որոնք, նրա կարծիքով, սուլթանի հետ մեկտեղ պարասխանաբար են կոտորածների համար:

Արեւմուրքի քաղաքականությունը շար ավելի խստորեն է քննադատում 1891-1897 թթ. Ա. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոն: Վ. Պողոսյանը այս հեղինակի օրինակով էս ցույց է տալիս, որ Արեւմուրքը դարձավ արշաւալի գործողությունների մեղսակիցը և սառը ականաբեր: «Դուր վճել էր հայերին ոչնչացնել երկաթի, կրակի և սովի միջոցով», - հավաստում է դեսպանը: Այդ պայմաններում «Հայերի ճակարագիրը պեւոթություններին առանձնապես չի անհանգստացնում. նրանց համար խոսքը, ֆինանսական հարցից բացի, նախ և առաջ վերաբերում է այն բանին, որ խոչընդոտեն իրենցից որևէ մեկի ազդեցության կամ տարածքի ընդլայնմանը»:

Վ. Պողոսյանը միանգամայն հիմնավոր է ընդունելի է համարում նաև Հայկական հարցի Լ. Սեյրուի մեկնաբանությունները: Նրա ըմբռնման հիմնական էությունը, ըստ հեղինակի այս է Սեյրուայի կողմից Թուրքիային առաջադրված բարենորոգումները տապալվեցին միայն այն պարճառով, որ բոլոր պեւոթությունները ընդունում են Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու «տիրահոջակ» վարդապեւոթությունը, միաժամանակ ընդգծելով, որ նրանց միջև կան նաև շահերի բախումներ, որից հմորեն է օգտվում սուլթանը: Վ. Պողոսյանի կարծիքով Սեյրու, սակայն, շրջանցում է Հայկական հարցի ծագման պարճառների պարճառը, այն, որ Թուրքիան բռնագավթել է հայերի պարմական հայրենիքը:

Վ. Պողոսյանը ներկայացնում է նաև մի շարք այլ Ֆրանսիացի պարմաբանների դիրքորոշումները համիդյան կոտորածների և արեւելյան հարցում Ֆրանսիայի կառավարության որդեգրած քաղաքականության խնդիրներում: Դրանցից են «Ռեյու դե ռեյու» հանդեսի տրօրեն Ժ. Ֆինոն, որ Ֆրանսիայում առաջիններից է լուսաբանել կոտորածների հավաստի պարկերը, հրապարակել անգլիացի գործիչ Մ. Բոլի «Հայաստանը Սեյրուայի առջև» աշխատությունը: Նեղինակը արժեքավոր է համարում նաև Փարիզում սալոնների հոջակավոր տեր մաղամ Նուդրի Մենոսի երայթը հայկական հարցին նվիրված մի խոշոր հավաքում: Հայկական կոտորածները դիտելով իբրև մի «նոր Բաթուղիմեոսյան գիշեր», նա համոզմունք է հայտնել, որ «անհնար է թվարկել այն բոլոր քաղաքները, որտեղ մահմեդական մոլեռանդությունը ահաբեկչություն, մահ և հուսալքություն է սփռել»:

Իրադարձություններին հայեցակարգային այլ մեկնաբանություններ են տվել մի շարք ուրիշ ժամանակակիցներ, այդ թվում պարմաբաններ Կարա դը Վոն և Ա. Լերուա-Բոլիոն: Առաջինը մասնավորապես գրել է. «Մահմեդական ոգին այս պահին Ասիայում ամբողջությամբ պարբաստ է մեծ հանցանքներ իրագործելու, և հեռվում, անհայտ հովտում բոցկլտաց այն կայծը, որից պեւոթ է սարսափելի հրդեհ բռնկվել»:

Վ. Պողոսյանը պարմաբան Լերուա-Բոլիոյի ուսումնասիրությունը արժեքավորում է մասնավորապես այն հանգամանքով, որ նա շրջագայել է Արեւմտյան Հայաստանում և անձամբ է տեսել այն իրողությունները, որոնք լուսաբանել է: Տեսածից ցնցված՝ նա գրել է. «Պարմությունը երբեւէ չի արճանագրել, կասեմ ավելին՝ անջափ հանցագործությունների հետևանքով մեր տիրուր, արշաւաներկ երկրագնդի վրա արևն իսկ հավանաբար չի տեսել երբեւէ այնչափ սարսափազդու ներկայացում, քան այն, որը շաբաթներ և ամիսներ շարունակ

յրեղի է ունեցել Արեւելյան Անապոլիայի հարթավայրերում»։ Ողբերգության համառոտ, սակայն հավասարի պարկերը վեր է հանել նաև պարմաբան Ռ. Բարիդունը։ Վ. Պողոսյանը նշում է սակայն, որ այս վերջին երկու հեղինակներն էլ իրողությունները մեկնաբանում են սխալ հայեցակարգային պետակերպից, այն է՝ կոտորածների պարճառը համարում են մահմեդական մոլեռանդությունը։ Թուրքն, իհարկե, իր նվաճած քրիստոնեական երկրներում ամենուր հանդես է բերել իր կրոնական մոլեռանդությունը, սակայն ծրագրել բնաջնջումը մի ողջ ազգի՝ դա միմիայն ռասիստական անհանդուրժողականություն է, որի սոսկ մի բաղադրիչ մասն է կրոնական անհանդուրժողականությունը։

Կոտորածների շրջանում ֆրանսիացի մի շարք պարմաբաններ Հայկական հարցին անդրադարձել են նաև Ֆրանսիայի արեւելյան քաղաքականությանը և Արեւելյան հարցի պարմությանը նվիրված աշխատություններում։ Նրանցից առավել աչքի ընկնողը Է. Դրուայի մեկագրությունն է։ Նրա ելակերպային դրույթն այս է՝ Աբդուլ Համիդը վճռել էր «Հայկական հարցին լուծում տալ հայերին ոչնչացնելու միջոցով»։ Իրադարձությունների պարճառը նույն ելակերպից է մեկնաբանում նաև Ժ. դը Դյուբորը։ Վ. Պողոսյանը նրա պարմական հայացքների մեջ առավել արժեքավորը համարում է այն, որ նա տրակավին ԺԹ. դարի վերջին առաջադրել է Թուրքիայում ցեղասպան հասարակության գոյության իրողությունը։ Ի դեպ, այդ տեսակետը այսօր ցեղասպանագետները ընդունել և մշակել են որպես նոր հասկացություն։

ԺԹ. դարի վերջերին Հայոց դարի պաշտպանությամբ էր հանդես գալիս ֆրանսիացի նշանավոր գործիչ Է. Լավիսը։ Նա Ֆրանսիայի արեւելյան քաղաքականությանը նվիրված հոդվածներում թեև հանդես է եկել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման օգտին, սակայն նշելով, որ Ֆրանսիան տնտեսական մեծ շահեր ունի Թուրքիայում, միաժամանակ ընդգծել է՝ այդ քաղաքականությունը չի ենթադրում «սուլթանին իրավունք վերապահել վայրագ բռնակալության միջոցով վարկաբեկելու այդ կայսրության գոյության խսկ փաստը»։

Լավիսը նշավակում է Ֆրանսիայի արագորձնախարար Հանտրոյի թրքամեր քաղաքականությունը, որի ջանքերով «Դեղին գրքում» գերեզման բազում փաստաթղթեր հրապարակվել են կրճատումներով։

Արեւելյան հարցի ուսումնասիրողների մեջ Վ. Պողոսյանը առանձնացնում է նաև Է. Լամին։ Ըստ վերջինիս տեղական թուրքական իշխանությունները տեղերում հայերի համապարած սպանություններին ձեռնամուխ են եղել միայն սուլթանի հրահանգներով։ Լամին փվյալներով սպանվել է 150.000 տղամարդ, կին և երեխա, իսկ 80 հազարն էլ գոհվել է թշվառությունից։

Գրքում հիշարակելի է համարվում նաև ֆրանսիացի լրագրող, «Տան» թերթի Կ. Պոլսի թղթակից Ժ. Գուլիսի մեկագրությունը, ուր հեղինակն ապացուցում է՝ Աբդուլ Համիդի համար խլամիզը դարձել էր իր իշխանությունը և մահմեդական գերիշխանությունը պահպանելու միակ հենարանը։

Համիդյան կոտորածներին հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ են տվել նաև պարմաբաններ Ժ. Բեքերը, Շ. Սենյոբուրը, թուրքագետ Մ. Լ. Կահիրը։ Այս երեք գործիչներն էլ, ի թիվս բազում հարցերի, քննարկել են Օսմանյան կայսրությունում ապրող

այլ ժողովուրդների բռնի խլամագման քաղաքականությունը, որը ավելի լայն չափերով սկսեց իրականացվել հենց Աբդուլ Նամդի օրոք: Լ. Կախընը նույնիսկ «Կամիլի» գործախավորումների սպեղծումը մասամբ պայմանավորում է քրդերի և արաբների օսմանագումը դյուբին դարձնելու մրադրությամբ:

Անվտիկով Նայոց ցեղասպանության առաջին փուլի՝ Ֆրանսիական պարմագիտական մարքի մեջ հարուցած արձագանքները, Վ. Պողոսյանը նշում է, որ Նայկական հարցի ծագմանը և ցեղասպանությանը վերաբերող խնդիրներին, բացի պարմաբաններից, անդադարձել են նաև մի քանի Ֆրանսիացի իրավաբաններ և դիվանագետներ, այդ թվում՝ Մ. Շուրլինեն, որ մասնավորապես օգտագործել է Ֆրանսիայի և Անգլիայի արագործնախարարությունների վավերագրերի «Կապույտ» և «Դեղին» ժողովածուները, Ա. Կախյուն, Էնգելհարդը, Ժ. Բ. Շոդոդին: Նրանք բոլորն էլ միաբան են, որ հայերի կոտորածները իրականացվում են պետական ամենաբարձր մակարդակով, իսկ եթե երրորդական պետությունները չեն բռնում սույրանի արյունոտ ձեռքը, ուրեմն լուռ հանցակիցներ են:

Վ. Պողոսյանը Նայոց ցեղասպանության առաջին փուլի արձագանքները ներկայացնում է երկու փուլով. առաջինն ընդգրկում է բուն կոտորածների ժամանակներից մինչև 1909 թվականը, երկրորդը՝ 1909-1918 թվականները: Այս բաժանումը արդարացված է, քանի որ մինչև 1909 թվականը «կարմիր սուլթանի» իշխանության շրջանն է, իսկ 1909-1918 թվականները՝ երկրորդների իշխանության շրջանը, ներառյալ Առաջին համաշխարհային պարերազմը և Նայոց եղեռնի երկրորդ փուլը կամ Նայոց Մեծ եղեռնը: Այդ շրջանում հեղինակը առաջինը ներկայացնում է Ա. Բարի «Սպիտակ սպրկություն» գիրքը՝ նվիրված Նայասպանին և Մակեդոնիային: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյաների կեցության բնութագրմանը, Բարը, ըստ հեղինակի, պալիս է դրա միանգամայն անկողմնակալ և հավասարի պարկերը, սակայն հայեցակարգային մոտեցում չունի պարմագիտքերն վեր հանելու Նայկական հարցի ծագման նախադրյալները: Նա Թանգիմաթի շրջանում ընդունված բարենորոգչական փաստաթղթերը համարելով իբրև թղթի վրա մնացած խոսքումներ, քրիստոնյաների նկարմամբ կիրառվող անլուր բռնությունները բացառում է լոկ կրոնական մոլեռանդությամբ: «Թուրքիայում ոչինչ չի փոխվել, քանզի ոչինչ չի կարող փոխվել: Իսլամը թշնամական վերաբերմունք ունի նորամոծությունների հանդեպ», - գրել է Բարը: Նա ժխտում է այն մեղադրանքները, թե իբր բռնությունները սկիզբ են առնում հայերի հեղափոխական գործունեության պարճառով: Որպես իր այդ դիրքորոշման ճշմարտացիության փաստարկներ՝ նա վկայակոչում է 1858 թ. Բեռլինյան կոնգրեսում Ամենայն Նայոց Կաթողիկոս Խրիմյան Նայրիկի՝ փերությունների ներկայացուցիչներին հանձնած խնդրագիրը, ինչպես նաև հայ պարվիրակների՝ կոնգրեսի նախագահին ներկայացրած երկու փաստաթղթերը՝ «Ծրագիր կազմակերպական կանոնակարգի Օսմանյան Նայասպանի» և «Վիճակագիր Օսմանյան Նայասպանի»: Ի պարբերություն Բարի, աստվածաբան Է. Դումերգը կարողացել է վեր հանել Նայոց ցեղասպանության հիմնական պարճառը: Ներադարձ հայացք ներելով Օսմանյան կայսրության կազմավորման արյունալի պարմությանը, նա թուրքերին համեմատում է Իրանի և Նայասպանի վրայով անցած փոթորկի հետ, որոնք, ելնելով Կենտրոնական Ասիայի անապարներից, սպրկացրին ոչ միայն Փոքր Ասիայի, այլև Արևելյան Եւրոպայի շարք քրիստոնյա ժողովուրդների:

Դումերգը Օսմանյան իշխանությունը համարում է ոչ միայն կրոնամոլ, այլև առաջին հերթին ռազմամոլ համակարգ:

Նաջոթ գործիչը, որի ուսումնասիրությանն անդրադարձնում է հեղինակը, Ժ. Դենին է: Վերջինիս հիմնական պնդակերպն այն է, որ իրադարձությունները ծրագրվել են իրականացվել են պերական մակարդակով: Ի տարբերություն իր նախորդների, Դենին գրեթե բացառում է կրոնական անհանդուրժողականության գործոնը: Վ. Պողոսյանը դա իրավամբ համարում է ոչ օբյեկտիվ մոտեցում. չէ՞ որ իշխանությունները կոպտաձեռներ իրականացնելիս շատ բանով օգտվում էին այդ գործոնից՝ գրգռելով գործերի և ամբոխի մահմեդական մոլեռանդությունը:

Գրքում արժեքավոր են համարվում «Ժուրնալ» թերթի զինվորական թղթակից Ա. Բարբիի իրադարձություններին տված գնահատականները: Նա 1916 թ. եղել է Արևմտյան Նայասպրանի տարբեր քաղաքներում: Առանձնապես արժեքավոր է համարվում Բարբիի վերլուծություններին այն մասը, որտեղ նա հայերի կոպտաձեռները համարում է շարունակական բնույթ կրող քաղաքականություն, որը օսմանյան պետությունն իրագործում էր Արևմտյան լեռնային համաձայնությամբ: Մոտավորապես նույն դիրքորոշումն ունի նաև արևելագետ Ժ. Մորգանը: Նրա քննախոսության մեջ արժեքավորն այն է, որ հայրնի արևելագետի բոլոր եզրահանգումները խաբսիված են անձամբ իր իսկ սրացած տպավորությունների վրա, քանզի նա եղել է 1896 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած կոպտաձեռների ակնուրույն:

1909-1918 թթ. Արդուի Նամիդի հայախալած քաղաքականությանը անդրադարձել են նաև որոշ ֆրանսիացի իրավաբաններ, ի թիվս որոնց՝ Է. Լեմոնը: Վերջինս Նայկական հարցը քննարկելով միջազգային հարաբերությունների հենքի վրա, հիմնականում ուսումնասիրում է մեծ տերությունների շահերի բախման խնդիրները. այդ համատեքստում նա մասնավորապես ջատագովում է Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու՝ Ֆրանսիայի քաղաքականությունը և ի հակադրություն այդ ուղեգծի՝ ներկայացնում Թուրքիայում ազգամիջյան հարաբերությունները հնարավորին չափ սրելու, Արդուի Նամիդի գործելակերպը վարկաբեկելու՝ Անգլիայի քաղաքականությունը, որ չափ նպատակն, իբր, Թուրքիայում ռազմական միջամտություն ցուցաբերելու և Նայասպրանում իր ազդեցությունը ուժեղացնելու պայքարակի սրելովումն էր: Ըստ Վ. Պողոսյանի ֆրանսիացի դիվանագետի այդ հետևությունները խիստ չափազանցված են: Ի տարբերություն իր նախորդի՝ մեկ այլ իրավաբան՝ Ֆ. Մուրբեզին իրավիճակը քննարկում է արդարադատ դիրքերից, նշելով, որ թուրքերը գրավել են հայերի հայրենիքը և այդ ժողովուրդը անասելի տառապանքներ է կրում իր իսկ բնօրրանում: Նայասպրանի գործերին Եւրոպայի միջամտության իրավունքը նա համարում է անառարկելի, ընդգծում, որ մեծ տերությունները այդ իրավունքը օգտագործում են սոսկ Թուրքիային բարենորոգումներ առաջարկելով, սակայն չեն վերահսկում այդ բարենորոգումների իրագործման ընթացքը, ինչի հետևանքով քրիստոնյաների կացությունը էլ ավելի է վարանում: Դրա ապացույց եղավ մասնավորապես Մասունի կոպտաձեռը: Վ. Պողոսյանը Մուրբեզիի հայացքներում առանձնացնում է նրա այն դրույթը, որ հայ ժողովրդի անվտանգության պնդակերպից Նայասպրանի՝ Ռուսաստանի կազմում ընդգրկվելը անմամեմատ ավելի նպատակահարմար է, քան Թուրքիայի կազմում մնալը:

Վ. Պողոսյանը առանձին գլխում քննարկում է Նայոց ցեղասպանության իրողությունը ժխտող պատմագրության սկզբնավորման հանգամանքները:

Նեղինակի կարծիքով այդ կեղծ պատմագրությունը սկիզբ է առել Ֆրանսիայում, որի համար հիմք է ծառայել ավյալ ժամանակաշրջանում Ֆրանսիայի վարած թրքամեր թաղաքականությունը: Ըստ Վ. Պողոսյանի, այդ շրջանում ի հայտ են եկել պատվեր կատարող շատ անհատ հեղինակներ, իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիայի այդ շրջանի արագործնախարար Գ. Նանտոյին, ապա նա էս պատվեր կատարող է, իսկ պատվիրատուն՝ Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի փոփոխական և թաղաքական շահը: Նա միտմունավոր ժխտում է իրադարձությունների ցեղասպան բնույթը, Աբդուլ Նամիդին բացարձակապես չի համարում դրանց կազմակերպիչը, ավելին, սուլթանին բնորոշում է որպես «աստվածավախ մահմեդական», ուստի գրում է, որ սպեղծված ճգնաժամը հարկ է համարել ներքին հարց և խնդրի կարգավորումը թողնել միայն սուլթանի հայեցողությանը. «Նեց դա է, որ պետք է ցանկանան ամենքը: Սուլթանը մնում է իր երկրի փրակալը»- եզրակացնում է նա: Գրքում ընդգծվում է, որ Նանտոյն մի առանձին հոդվածում արյունալի իրադարձությունները համարում է միջադեպ մահմեդականների և հայ քրիստոնյաների միջև: Սակայն անգամ այդքան ժխտողական դիրքորոշման դեպքում հայերի՝ գերերով թափված արյունը, այդուհանդերձ, բողոքում է արագործնախարարի հոդվածի փողապակերից, դուրս է հորդում և արյունով ներկում ամբողջ շարադրանքը: Դիցուք, նա ինքն է գրում. «Անցյալ ձմեռանը քեզի ունեցան բռնություններ և չարաշահումներ, որոնք արյունաներկ արեցին Նայասարանը»: Սակայն ավելացնում է, որ այդ պարճառով ծագած խնդիրը ի գործ է լուծել միայն սուլթանը: Սա մի ցայտուն օրինակ է, թե պատմական իրողությունը պարմաբան նախարարի գրչի փակ ինչպես է դառնում թաղաքականության և դիվանագիտության առևտրի առարկա:

Վ. Պողոսյանն ընդգծում է, որ Նանտոյի այս դիրքորոշումը կարծես պետական մակարդակով մի ցուցում լինի իրողությունը կեղծողների համար, որոնցից առանձնացնում է պարմաբան Պ. Ալոշին: Վեջինս թեև շրջագայել է Արևմտյան Նայասարանում, սակայն գլխավայր է շուռ փալիս իրավիճակը և անփոփոխ թուր մահմեդականների կողմից հայերի կեղերումներն ու հալածանքները, գրում է. «Ասիայում ամենուր հայերն ապրում են շքեղության մեջ»:

Ալոշն ընդունում է թեև համխառնականության գաղափարախոսության գոյությունը, սակայն ժխտում է դրա թաղաքական բնույթը և ռազմամոլ էությունը: Պարմության կեղծարարի ասելով այդ գաղափարախոսության հիմնական նպատակը իսլամ դավանող բոլոր ժողովուրդներին Օսմանյան կայսրության առաջնորդությամբ համախմբելն էր, քանզի այդ ժամանակ թուրք սուլթանը ամբողջ աշխարհի մահմեդականների առաջնորդն էր՝ խալիֆը:

Շատ սկզբունքային խնդիրներում Ալոշին է ձայնակցում Ռ. Դև Կուրսունը, իսկ ժողովրդագրական խնդրի արծարծման դեպքում գերազանցում նրան: Այդ խնդրի նենգափոխությունն այնպեղ է հասնում, որ նա, հայերին համարելով կայսրությունում ընդամենը մի նվազ փոքրամասնություն, գրում է. «Բրդերն անառարկելիորեն երկրի իսկական քերն ու փնօրեններն են նախևառաջ այն պարճառով, որ բնիկներն են, հեպո էլ կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը»: Վ. Պողոսյանը այսպեղ իրավացիորեն նկատում է, որ կեղծարարը երկիր ասելով, անշուշտ, նկատի ունի Արևմտյան Նայասարանը:

Մեր կողմից նշենք, որ քրդերը ինչպե՛ս կարող են լինել Արևմտյան Նայասարանի

բնիկները, երբ Քրդստան հասկացությունը պարմության մեջ ի հայտ է եկել ընդամենը ԺԲ. դարում, այն էլ ոչ թե իբրև երկիր և ժողովուրդ նշանակությամբ, այլ որպես սոսկ քրդերով բնակեցված տարածք ենթադրող պայմանական աշխարհագրական եզրույթ:

Նոդինակը չի բավարարվում սոսկ արձանագրելով, թե Նայկական հարցի նկատմամբ բացասական վերաբերմունքը Ֆրանսիացի որոշ պարմաբանների ու դիվանագետների քննախոսություններում ինչ դրսևորումներ է ունեցել, այլ ընդգծում է, որ այդ դրսևորումներն ունեին ցայտուն արտահայտված հակասակցիական բնույթ: Այդ իրողությունը մեկնաբանելու համար Վ. Պոդոսյանը վեր է հանում Ֆրանս-անգլիական հարաբերությունների լարվածության պարմական հենքը, այն է՝ սկսած ԺԹ. դարի 70-ական թվականներից Անգլիայի հեղափոխությունը Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի նկատմամբ աճել էր, մանավանդ 1869 թ. Սուեզի ջրանցքի գործարկվելուց հետո: Այդ պայթյալը հանգուցալուծվեց 1882 թ., երբ Անգլիան բռնակալեց Եգիպտոսը:

Վ. Պոդոսյանը այս հենքի վրա է մեկնաբանում Ֆրանսիայի բացահայտ ձգտումը Մերձավոր Արևելքում, մասնավորապես Արևմտյան Նայստանում փրկի ունեցող արյունալի իրադարձությունների համար պարասխանաբար համարելու ոչ թե ոճիրների կազմակերպիչ Աբդուլ Նամիդին, այլ Անգլիայի կառավարությանը, որը, իբր, ամեն գնով հայերին հրահրում է ուրբի ելնել օսմանյան իշխանությունների դեմ:

Ընդհանուր գծերով նույն դիրքորոշումն ունի նաև մեկ այլ գեղծարար պարմաբան՝ Պ. Աբդուն Բուաստը: Նա հայերի կոտորածները մեկնաբանում է իբրև «հայերի ապստամբություն», որի հետևանքով ծագած մեղսագործությունների համար ամբողջովին պարասխանաբար է համարում հայերին: Այս գեղծարարի դիրքորոշումը Վ. Պոդոսյանը մեկնաբանում է պարմական հիմքի վրա, այն է՝ Արևելյան հարցում Ֆրանսիան փվյալ շրջանում դաշնակցում էր ցարական ինքնակալության հետ, որը վարում էր ոչ հայանպասք քաղաքականություն և կողմնակից էր Թուրքիայի ներքին հարցերում սուլթանի լիակատար ազատությանը, մի իրողություն, որի կրթոս ջարագովն էր Ֆրանսիայի արագործնախարար Նանտոն: Բուաստը գոնունակությամբ է ընդունում այն իրողությունը, որ Ռուսաստանը հակված չէ Փոքր Ասիայում հայերին տրամադրել մի տարածք, որը կարող է դառնալ «հայկական անկախ թագավորության հիմքը»:

Որպես այդ բոլոր ժխտողական հայեցակետերի սպառիչ պարասխան՝ Վ. Պոդոսյանը վկայակոչում է մեր ժամանակակից Ֆրանսիացի պարմաբան Ի. Տերնոնի գնահատականը. «1895 թ., բացառությամբ Բաբը Ալիի ցույցի, հայերը չէ, որ փրկիք են փվել բռնությունների սանձազերծմանը: Նրանք երբևէ բացահայտորեն չեն ապստամբել իշխանության դեմ»:

Ավարտելով թեմայի պարզաբանումը, գրքում պարահական չի համարվում այն իրողությունը, որ Ֆրանսիացի պարմաբանների ժխտողական ելույթները սկսել են առանձնապես լայն բնույթ կրել Սասունում փրկի ունեցած կոտորածներից հետո: Բանն այն է, որ այդ դեպքերը հետաքննելու համար կազմվեց միջազգային հանձնաժողով, որը փրկում իր ուսումնասիրությունները ամփոփեց «Նամափրեղ հայտարարության» մեջ: Այդ կարևոր փաստաթղթում կոտորածների համար պարասխանաբար են համարվում օսմանյան իշխանությունները, իսկ կեղծարարները փորձում էին հակառակն ապացուցել:

Գրքում այնուհետև քննության են առնվում սուլթանի նախաձեռնած հայաստանության՝

Ֆրանսիական հասարակական մտքի մեջ հարուցած արձագանքները: Ընդ որում հարկապես շեշտվում է, որ իրադարձությունները խստիվ դարապարտել են անաչառ դիրքերից են գնահատել այնպիսի հասարակական-քաղաքական գործիչներ, ովքեր նույնիսկ հակադիր քաղաքական հայացքներ ունեին, դիցուք՝ պահպանողականները և սոցիալիստները: Նեղինակը այդ գործիչների մեջ առանձնացնում է առաջին հերթին նշանավոր քաղաքական գործիչ, 1875 թվականից արմատականների առաջնորդ, 1906-1909 և 1917-1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանտյոն: Նա թուրքական վայրագություններին առաջին անգամ անդրադարձել է 1896 թ. Փարիզում լույս տեսած «Նայաստանի կոտորածները, ականատեսների վկայություններ» ժողովածուի առաջաբանում, իսկազույն դարապարտելով հայերի, այն է՝ Արևելքում ամենաապարքիստական ազգի բնաջնջման քաղաքականությունը: Նա առանձնապես քննադատում է «մարդու իրավունքների» օրրան Ֆրանսիայի կառավարությանը, որը չի համարձակվում «արդարություն պահանջել կամ նույնիսկ մարդասիրական որևէ խոսք ասել», և որի ներկայացուցիչը՝ 1898-1902 թթ. պարզամտվորների պալատի նախագահ Պ. Դեշանելը սեղմում է Աբդուլ Նամիդի՝ «երեխաների արյան մեջ կարմրագունած, արյունոտ ձեռքը»: Տեսնելով, որ Նամիդը փաստորեն Երուսալեմից արքունություն է ստացել երկրում գործելու իր ոճրապարտ հայեցողությամբ, Կլեմանտյոն նույնիսկ կոչ է արել զինված միջամտություն իրականացնել օսմանյան պետությունում:

Այս ամենը ներկայացնելով հանդերձ, Վ. Պողոսյանը չէր կարող չանդրադարձնել մի կարևոր հանգամանք և իրավացիորեն չի անդրադարձնել, այն է՝ 1905-1907 և 1917 թթ. ռուսական հեղափոխությունների ազդեցության փակ Կլեմանտյոնի հայացքներում փոփոխություններ, նա արմատական ժողովրդավարական դիրքերից անցավ աջ հայացքների. դիցուք՝ 1909 թվականին, երբ նա արդեն ընդդիմադիր չէր և Ֆրանսիայի վարչապետ էր, մտազայտ էր փոխել հայ ժողովրդի արդար դարը:

Մյուս նշանավոր քաղաքական գործիչը, որի հայապաշտպան դիրքորոշումը ներկայացվում է գրքում, Ֆրանսիայի ազգային ակադեմիայի անդամ, պահպանողական Դ. Կոշենն է: Նա 1896-1899 թթ. Ֆրանսիայի Ազգային ժողովում բազմիցս է հանդես եկել բոլոր նրանց դեմ, հարկապես պետական գործիչների, ովքեր՝ փորձում էին մեծ չարիքի պարճառը համարել հայերի այսպես ասած «հեղափոխական գործունեությունը»: Կոշենը գրում էր, որ չարագործությունների առաջին կազմակերպիչը և դրանց բուն պարճառի առաջին զեղծարարը օսմանյան կառավարությունն է:

Վ. Պողոսյանը անուրանալի է համարում նաև այն ներդրումը, որը ոճիրի կազմակերպիչներին բացահայտելու և հրապարակապ դարապարտելու գործում ունեցել են Ֆրանսիական սոցիալիստների անվանի առաջնորդներ Ժ. Ժորեսը և Ֆ. Պրեսանսեն: 1885-1889 և 1893-1898 թթ. լինելով Ազգային ժողովի պարզամտվոր, Ժ. Ժորեսը նրա նիստերում բազմիցս է հանդես եկել հայապաշտպան ելույթներով, նշել, որ կոտորածները սկսվել են ոչ թե փարեթայնորեն, այլ իշխանությունների կողմից կազմակերպված կանոնավարությամբ, «շեփորների հնչյունների ներքո»: Նրա մեկնաբանմամբ Նամիդը, ի վիճակի չլինելով արդարություն հաստատել, այսինքն՝ արդարացի բավարարում փախ հայերի պահանջներին, որոնց հետևում խոսքով կանգնած էին երուսալեմյան քրեությունները, ընտրել է հարցը պահանջարկերին բնաջնջելու միջոցով լուծելու ճանապարհը:

1896 թ. Ազգային ժողովում բանավիճելով արագորժնախարար, թուրքամեր Նանուպոյի հեր, Ժորեսը նշել է, որ վայրագությունների համար պարասխանաբու են ոչ միայն սուլթանը իր շրջապատով, այլև Երոպան: Քանի որ Երոպան չի կարարում Բեռլինում իր սրանձնած պարավորությունները, նա արևմտահայերին համարել է «երոպական բանասերության գոհեր»: Ավելին, անդադառնալով Օսմանյան կայսրության մասնաբաժան՝ մեծ աղմուկ հանած հարցի ծագմանը, Ժորեսը նշել է, որ այդ երկրում ապրող ոչ մուսուլման ժողովուրդները ապահով գոյության երաշխիքներ չունեն: «Արևելյան հարցը կրկին կյանքի է կոչվել, որովհետև հայ ժողովուրդը կոտորվել է»:

Այնուհետև վերածվում է Նայկական հարցի նկարմամբ Մարդու իրավունքների լիգայի նախագահ, Ազգային ժողովի պարգամավոր Ֆ. դր Ղրեսանսեի դիրքորոշումը, որը սկզբում կրում էր չափավոր բնույթ (հավանաբար դեպքերին լավ իրագրել չլինելու պարճառով), սակայն հերագայում դառնում է շար հստակ և սկզբունքային, այն է՝ հայերի կոտորածները կրոնական մոլեռնությունների արարեային բռնկում չէին, այլ ամենաբարձր մակարդակով կազմակերպված «սարսափագրու ողբերգություն»:

Վ. Պողոսյանը հիշարակում է նաև հայրնի քաղաքական գործիչ, Ազգային ժողովի պարգամավոր, կոմս Ա. դր Մունի ավանդը ջարդարար իշխանությունների արյունոտ դեմքը բացահայտելու գործում: Ամենախիսար ոգով դարապարտելով օսմանյան իշխանությունների վայրենաբար գործողությունները և դրանց լեյլայն մեղսակիցը դարձած երոպական րերությունների երեսպաշտությունը, Մունը, սակայն, մեծ հաշվով հանդես է գալիս Օսմանյան կայսրության ամբողջական պահպանման օգրին, գրնելով, որ դա «խաղաղության երաշխիք» է, պայմանով, որ այդ ամբողջականությունը պերք է հասարաված լինի նվաճված ժողովուրդների, մասնավորապես հայերի «ապահովության» վրա:

Վ. Պողոսյանը մեծ է համարում նաև աշխարհահռչակ գրող Ա. Ֆրանսի դերը համիդյան կոտորածների դեմ ֆրանսիական հասարակական միքը պայքարի հանելու գործում: Նշվում է, որ մեծ մարդասերն ու գեղագերը իր բողոքի ձայնն էր բարձրացնում ամենաբազմազան ամբիոններից ոչ միայն Ֆրանսիայում, այլև նրա սահմաններից դուրս: Դա փաստորեն ազար մրաճող մրավորականության խղճի ձայնն էր ընդդեմ օսմանյան դահճապերության: Նա այդ թեմայով առաջին անգամ ելույթ է ունեցել 1897 թ. Փարիզում գումարված հայանպասր նիսարում, որրել հայ ժողովրդի պարմությանը և հայ գրականությանը նվիրված դասախոսությանը հանդես է եկել Արշակ Չոպանյանը: Նախագահելով նիսարում, Ֆրանսը հարկապես ընդգծել է, որ օսմանյան անաշխար իշխանությունը և նույնքան անաշխար նվաճողական րարերը բնաջնում են մի սրելճագործ ժողովրդի, որի պարմությունը ազարության համար մղվող պայքարի ցայրուն դրվագների մի բազմադարյան շարան է, իսկ սրելճած գրականությունը՝ այդ պայքարի մի հոգետր վիպերգություն:

Ընդգծվում է նաև ֆրանսիացի հայրնի գրող Կ. Ռեմիի (հայրնի է Սևերին կեղճանվամբ) հայապաշտյան գործունեությունը: Վ. Պողոսյանը նրա «Նայասրանի կոտորածները» հողվաճը համարում է «լույսի առաջին շողը» Նայկական հարցում «խավարի թագավորության» մեջ խարխափող ֆրանսիական իրականության մեջ:

Վ. Պողոսյանը առանձին գլխով անդրադառնում է նաև բանասրելճ, գրականագեր

և թարգմանիչ Պիեռ Քիառի գործունեությանը: Ա. Պոլսի հայ համայնքը նրան հրավիրել էր ֆրանսերեն և լատիներեն դասավանդելու Բերայի հայկական վարժարաններից մեկում: Լինելով դահճապետական իշխանությունների նյութած եղեռնագործության ականապես ու վկան, Քիառը թողել է Նայկական հարցին նվիրված մի ամբողջ ժառանգություն, որում արձանագրված են կոտորածների ցեղասպան չափերը վկայող բազում անհերքելի հանցանշաններ: Ուսումնասիրության մեջ ցույց է տրվում, որ իրադարձությունների բուն շարժառիթներին ավելի ու ավելի մոտիկից ծանոթանալուն զուգահեռ Քիառի տեսակետները դառնում են ավելի փաստաբանված ու իրարեսական: Եթե նա սկզբնական շրջանում կարծում էր, թե սուլթանը մասնակից չէ սպանդի կազմակերպմանը և նրան կհաջողվի վերահաստատել խաղաղությունը, ապա հետագայում համոզվում է, որ իրադարձությունների հիմքում դրված է ամենավերելից իջեցված և կանխամշակված մի ծրագիր:

Պ. Քիառը ներկայացված է որպես այն սակավաթիվ ֆրանսիացի մրավորականներից մեկը, ովքեր կողմնակից էին Օսմանյան կայսրության ներքին գործերին զինված միջամտություն ցույց տալու գաղափարին, բանգի գրնում էին՝ սուլթանին իր կամքով երբեք չի երաշխավորի թրխտոնյանների, քվյալ դեպքում հայերի նույնիսկ ամենապարզական իրավունքները: Նիմնավորելով իր տեսակետը, Քիառը գրել է, որ Ի դարի սկզբին ֆրանսիացի պարզամտների ջանքերով հարուկ հյուպատոսական գործակալի՝ Մուշ ուղարկվելը բավական եղավ այնպեղ հայ բնակչության՝ արդեն նախապարտատրված կոտորածը կանխելու համար:

Պիեռ Քիառը կարծում էր, որ Թուրքիային ուշքի բերելու համար բավական է նույնիսկ մի քանի երոպական պետությունների կռիվ միջամտությունը: Վ. Պոդոսյանը գրնում է, որ Քիառի այդ դիրքորոշումը հայանպասք լինելով հանդերձ, իրարեսական չէ, բանգի մեծ տերությունները առանց բացառության դեմ էին զինված միջամտությանը: Մասնավորապես Ֆրանսիայի արագործնախարար Նանտոն 1896 թ. Ազգային ժողովում հայտարարեց, թե անհրաժեշտ է կարականապես բացառել երոպական տերությունների տարանջատ գործողությունները: Պ. Քիառը, ըստ հեղինակի, եզակի մրավորականներից մեկն է, որ անդրադարձել է ֆիդայական շարժմանը, այն ներկայացնելով իբրև սեփական իրավունքների համար պայքարելու՝ հայ ժողովրդի կարողության վկայություն: Պ. Քիառը մյուս ֆրանսիացի գործիչներից առանձնանում է նաև նրանով, որ գրնում էր՝ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թիվը հասնում էր երեք միլիոնի:

Վ. Պոդոսյանը հիշատակում է նաև այն ֆրանսիացի հոգևորականներին, ովքեր սկզբից ևս թողնի ձայն ևն բարձրացրել ասիական մոլեռնո խավարի գործած ռճիրների դեմ: Մասնավորապես նշվում է, որ այդ հոգևորականները ուրույն կերպով ևն մեկնաբանում իրադարձությունները, դրանց հիմնական պարճառը համարելով թուրք տիրողների և խավար ամբոխի կրոնական անհանդուրժողականությունը:

Գրքում ներկայացվում է հայր Ֆ. Շարմեդանի, աբբա Պիզանիի, ավերարանական քահանա Ժ. Ապիայի, աբբա Գրիգելի գործունեությունը Ֆրանսիայի հասարակայնությանը իրադարձությունների մասին հավաստի տեղեկություններ տալու ուղղությամբ: Նրանք այդ նպատակով ելույթներ էին ունենում հասարակության առջև, հրապարակում արժեքավոր սկզբնաղբյուրներ, գրքույկներ և հոդվածներ: Նրանք բոլորն էլ, նշվում է

ուսումնասիրության մեջ, վկայակոչել են հավասարի րվյալներ, իսկ մասնավորապես հայր Շարմեարանը, ի տարբերություն շարերի, չարաղևոր անցքերի մասին կանոնավորապես րեդեկություններ էր ստանում րեդերից՝ Փրանսիացի միսիոներներից: Ինչպես երևում է, այդ միսիոներները եւս իրադարձությունները բացատրում էին առաջին հերթին ամբոխի կրոնական անհանդուրժողականությամբ, որը մոլագարության էր հասնում:

Այսպեղ փորձեցինք ընդհանուր գծերով ներկայացնել Վ. Պողոսյանի աշխատության մեջ արծարծված խնդիրները, Փրանսիացի ամենապարբեր գործիչների դիրքորոշումները եւ, որ ամենակարեւորն է՝ հեղինակի մեթոդյա վերլուծությունները:

Վերջում նշենք, որ գիրքը մի յուրօրինակ փորձ է մեկ առանձին եւրոպական երկրի, րվյալ դեպքում՝ Ֆրանսիայի օրինակով ցույց րալ, որ ԺԹ. դարի վերջում եւրոպական երկրները, ընդունելով Օսմանյան կայսրությունից բալկանյան երկրների անջատման իրողությունը, Ասիական Թուրքիան այլեւս դիտում էին որպես անբաժանելի պեպություն, բավարարվելով միայն Արեւմտյան Նայաստանում բարենորոգումներ կատարելու հայեցողական առաջարկներով:

Աշխատության մեջ այս համապարկերի վրա վկայակոչված արձագանքները, որպես փաստական հարուստ նյութ, վկայում են՝ 1894-97 թթ. աղևորալի անցքերը Նայոց ցեղասպանության առաջին փուլն էին եւ կազմակերպված էին իշխանությունների մակարդակով:

ՅՈՒ. ՆՈՎԱԿՆՆԻՍՅԱՆ